

Անկյուններ

Մեկ կետից դուրս եկող 2 ճառագայթներով կազմված պատկերը կոչվում է **անկյուն**:



Անկյուն կազմող ճառագայթները կոչվում են անկյան կողմեր, իսկ այն կետը, որից նրանք դուրս են գալիս, կոչվում է **անկյան գագաթ**:

Որպես անկյունների չափման միավոր վերցվում է **աստիճանը (1°)**:

Անկյուններ կառուցելու և չափելու համար օգտագործում ենք փոխադրիչը՝



Անկյունները լինում են՝ ուղիղ, սուր, փոփած ու բութ :



Ուղիղ

անկյուն


∠B-ն ուղիղ անկյուն է:

Սուր անկյունը փոքր է
ուղիղ անկյունից:


$\angle A$ -ն սուր անկյուն է, $\angle A < 90^\circ$

Ուղիղ անկյունից փոքր անկյունը կոչվում է սուր անկյուն:

Այն անկյունը, որի կողմերը կազմում են մեկ ուղիղ, կոչվում է փոփած
անկյուն: Փոփած անկյունը 180° է:




$\angle D$ -ն փոփած անկյուն է, $\angle D = 180^\circ$



Բութ անկյունը մեծ է ուղիղ անկյունից ու փոքր է փոխաձ անկյունից:

$\sphericalangle C$ -ն բութ անկյուն է, $90^\circ < \sphericalangle C < 180^\circ$

Այն ուղիղները, որոնց հատումից ստացվող անկյուններն ուղիղ են, կոչվում են ուղղահայաց ուղիղներ:



Անկյունների առավել ճշգրիտ չափումների համար օգտագործում են աստիճանի մասերը՝

բոլոր <<'>> և վայրկյան <<''>> :

$$1^{\circ}=60'$$

$$1'=60''$$

$$1^{\circ}=3600''$$

Առաջադրանքներ

- Ի՞նչ է անկյունը:

Անկյունը մեկ կետից դուրս եկող 2 ճառագայթ է:

- Ո՞րն է անկյունների չափման միավորը:

Անկյունների չափման միավորն աստիճանն է:

- Քանի՞ աստիճան է ուղիղ անկյունը:

Ուղիղ անկյունը 90° է:

- Քանի՞ աստիճան է փոփոխ անկյունը:

Փոփոխ անկյունը 180° է:

- Ինչպիսի՞ անկյունն է կոչվում սուր անկյուն:

Սուր անկյուն է կոչվում այն անկյունը, որը ունի $1-89^{\circ}$:

- Ինչպիսի՞ անկյունն է կոչվում բութ անկյուն:

Բութ անկյուն է կոչվում այն անկյունը որը ունի $90-180^{\circ}$:

- Ո՞ր ուղիղներն են կոչվում ուղղահայաց ուղիղներ:

Ուղղահայաց են կոչվում այն ուղիղները, որոնք երբեք չեն հատվում:

- Ինչպիսի՞ անկյուններ են $35^\circ, 89^\circ, 90^\circ, 115^\circ, 18^\circ, 75^\circ, 45^\circ, 60^\circ, 130^\circ$ անկյունները:

Սուր անկյուն- $35^\circ, 89^\circ, 18^\circ, 75^\circ, 45^\circ, 60^\circ$

Բութ անկյուն- $115^\circ, 130^\circ$

Ուղիղ անկյուն- 90°

- Ինչպիսի՞ անկյուններ են $120^\circ, 180^\circ, 90^\circ, 115^\circ, 45^\circ, 75^\circ, 60^\circ$ անկյունները:

Սուր անկյուն- $45^\circ, 75^\circ, 60^\circ$

Բութ անկյուն- $115^\circ, 120^\circ$

Ուղիղ անկյուն- 90°

Փոված անկյուն- 180°

- Ինչպիսի՞ անկյուններ կստացվեն, եթե ուղիղ անկյունը նրա գագաթից սկիզբ առնող ճառագայթով բաժանենք երկու հավասար մասի:

$$90:2=45^\circ$$

- Ինչպիսի՞ անկյուններ կստացվեն, եթե փոված անկյունը նրա գագաթից սկիզբ առնող ճառագայթով բաժանենք երկու հավասար մասի:

$$180:2=90^\circ$$

- Քանի՞ անկյուն կստացվի երկու ուղիղների հատումից:

4 անկյուն